Փոռ

Բնակչության թիվը՝ 143

Փոռ բնակավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախ կողմում, Վայքի լեռների հյուսիսային փեշերին, մարզկենտրոնից՝ 27 կմ հարավ-արևելք։
Այն վերաբնակեցվել է 1928 թվականին Խոյի Սավրա գյուղից ներգաղթած ընտանիքներով։ Բնակչության թիվը՝ 143։

Գյուղն ունի 1934 հա տարածք, սահմանակից է մարզի Զառիթափ, Մարտիրոս և Ազատեկ համայնքներին։ Ծովի մակարդակից գտնվում է 1510 մ բարձրության վրա։ Կլիման մերձարևադարձային է, ձմռանը՝ ցուրտ, ամռանը զով։

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, հացահատիկի, բանջարաբոստանային և կերային կուլտուրաների մշակությամբ։
Փոռի տարածքում են գտնվում Սբ. Աստվածածին (1910 թ.), եռանավ բազիլիկ (1830 թ.) եկեղեցիները և XIII-XIV դարերի խաչքարեր։
Գյուղն ունի բուժկետ և առևտրի կրպակ։